ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«06» 02 2017 թվականի N: 46-Ա **ք.Գյումրի**

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՓՈՂՈՑԻ 7/6 ՇԵՆՔԻ N 8 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տրդատ Ճարտարապետ 7/6 շենքի՝ որպես պետական սեփականություն անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2004 թվականի հունիսի 30-ի N 455380 վկայականը, Գյումրի քաղաքում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված բնակելի շենքերի բնակարանները վիճակահանությամբ բաշխման գործընթացի վերաբերյալ մարզային հանձնաժողովի 2000 թվականի սեպտեմբերի 6-ի արձանագրությունը և Գյումրու քաղաքապետարանի կողմից 2000 թվականի դեկտեմբերի 25-ին տրված «Բնակվելու թույլտվությունը», ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով՝ աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված Տրդատ Ճարտարապետ փողոցի 7/6 շենքի N 8 երեք սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ.

Մանուկյան Մարիետա Վոլոդյայի,
Մաթևոսյան Աստղիկ Հրաչի,
Մանուկյան Ասկանազ Հրաչի,
Մաթևոսյան Միսակ Վոլոդյայի,
Մաթևոսյան Կարինե Հրաչի:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է